# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N _112784228_ S4002

Պետության կարիքների համար ֆիքսված հեռախոսակապի ծառայությունների մատուցման

ք. Երևան "01"-08- 2013 թ.

Հեռահաղորդակցության օպերատոր <Արմենիա Տելեֆոն Կոմպանի> փակ բաժնետիրական ընկերությունը, որը գործում է համաձայն իրեն տրամադրված թիվ 60 արտոնագրի (լիցենզիայի), այսուհետ՝ <Օպերատոր>

**ք.Երևան, ՇԿԲ ԿՏ ԿՎԶԾ Խոշոր բիզնեսի զարգացման բաժին**

(նշել մարզը, շրջանը ,քաղաքը)

ի դեմս լիազորված անձ **Խոշոր բիզնեսի զարգացման բաժնի ղեկավար՝ Գոռ Զատիկյանի**

մի կողմից, և մյուս կողմից <Բաժանորդ> **ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ** ,ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն ի դեմս Նախարարության Աշխատակազմի ղեկավար՝ **Ա.Գրիգորյանի**, որը գործում է կանոնադրության հիման վրա,

**ք. Երևան, Արմենակյան 129**

( իրավաբանական անձի հասցեն, քաղաքացու գրանցման վայրի հասցեն )

կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն Պայմանագրով <Օպերատորը> պարտավորվում է <Բաժանորդին> մատուցել սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայություններ, իսկ <Բաժանորդը> պարտավորվում է <Օպերատորին> վճարել մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ֆիքսված հեռախոսային կապի ծառայությունների համար սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.2.<Բաժանորդին> էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները մատուցվում են Կողմերի միջև երկկողմ համաձայնեցված և ստորագրված առանձին փաստաթղթերում (հավելված 4) ամրագրված <Բաժանորդին> հատկացված հեռախոսագծերով, հեռախոսի համարներով, կապուղիներով, միացնող գծերով, ուղիղ գծերով, ISDN ցանցային տերմինալով՝ NETMOD սարքավորում, CDMA համակարգով հեռախոսագծի բաժանորդային տերմինալով, անտենայի և այլ կապի միջոցներով:

## 2. Պայմանագրի գինը, վճարման կարգը և ժամկետները

2.1 Սույն պայմանագրի համաձայն <Բաժանորդի> կողմից <Օպերատորին> վճարման ենթակա գումարը /պայմանագրի գինը/ կազմված է.

- Բաժանորդային վճարից՝ 1560000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) տարեկան, որը հաշվարկվում և վճարվում է ամսական կտրվածքով՝ փաստացի մատուցված ծառայությունների վճարի հետ միաժամանակ,
- Ինչպես նաև փաստացի մատուցված էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների վճարից, որը հաշվարկվում ամսական կտրվածքով՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ում ամրագրված գնացուցակի (նշված գները ներառում են ԱԱՀ):

2.2. <Օպերատորն> էլեկտրոնային փոստով <Բաժանորդին> է ներկայացնում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 2-ով և 3-ով ամրագրված օրինակելի ձևերի համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հաշիվ՝ հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 10-րդ օրվանից սկսած, սակայն ոչ ուշ, քան 25-ը:

*Տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա գումարը <Բաժանորդը> տրամադրում է որպես կանխավճար: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

Եթե <Օպերատորը> <Բաժանորդին> մատուցում է նաև այլ պայմանագրերով սահմանված էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, ապա <Օպերատորը> կարող է <Բաժանորդին> ներկայացնել բոլոր մատուցված ծառայությունների գծով մեկ միասնական հանձնման-ընդունման արձանագրություն, ինչպես նաև մեկ միասնական հաշիվ՝ կից ըստ պայմանագրերի առանձնացված հաշիվներով:

Վճարման ենթակա գումարի մասին տեղեկատվություն <Բաժանորդը> կարող է ստանալ այդ նպատակով առանձնացված հեռախոսահամարներով:

Հետագայում, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում <Բաժանորդին> հաշիվները կարող են տրամադրվել նաև այլ եղանակներով: